

Հավելված
Հաշվեքննիչ պալատի
2021թ. ապրիլի 30-ի թիվ 113-Ա որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՇՎԵՔՆՆԻՉ ՊԱԼԱՏ



ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՏԱՐԵԿԱՆ ԿԱՏԱՐՄԱՆ
ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

1. Ներածական մաս - էջ 2
2. Հապավումներ - էջ 4
3. Ամփոփագիր - էջ 5
4. Հաշվեքննության հիմնական արդյունքներ - էջ 9
5. Հաշվեքննության օբյեկտի ֆինանսական ցուցանիշներ - էջ 10
6. Անհամապատասխանությունների վերաբերյալ գրառումներ - էջ 12
7. Հաշվեքննությամբ արձանագրված այլ փաստեր - էջ 17
8. Հետհսկողական գործընթաց - էջ 23
9. Առաջարկություններ - էջ 26

1. Ն Ե Ր Ա Ծ Ա Կ Ա Ն Մ Ա Ս

Հաշվեքննության
հիմքը

ՀՀ հաշվեքննիչ պալատի 2021 թվականի փետրվարի 10-ի
թիվ 31-Ա որոշում:

Հաշվեքննության
օբյեկտը

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության Գիտության պետական կոմիտե:

Հաշվեքննության
առարկան

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի
նախարարության Գիտության պետական կոմիտեի 2020
թվականի պետական բյուջեի տարեկան մուտքերի
ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված
գործունեություն:

Հաշվեքննության
առարկայի
չափանիշները

«ՀՀ աշխատանքային օրենսգիրք», «Հաշվեքննիչ պալատի
մասին» ՀՀ օրենք, «Բյուջետային համակարգի մասին» ՀՀ
օրենք, «Գնումների մասին» ՀՀ օրենք, «Հաշվապահական
հաշվառման մասին» ՀՀ օրենք, ՀՀ կառավարության
2019թ. դեկտեմբերի 26-ի «Հայաստանի
Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի
կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ
1919-Ն որոշում, ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-
ի թիվ 1121 որոշում, ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-
ի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը
հաստատելու և ՀՀ կառավարության 2011թ. փետրվարի
10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին»
թիվ 526-Ն որոշում, ՀՀ կրթության և գիտության
նախարարի, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և
սպորտի նախարարության Գիտության պետական
կոմիտեի նախագահի հրամաններ:

Հաշվեքննությունն
ընդգրկող
ժամանակաշրջանը

2020 թվականի հունվարի 1-ից մինչև 2020 թվականի
դեկտեմբերի 30-ը ներառյալ:

Հաշվեքննության
կատարման ժամկետը

2021 թվականի փետրվարի 15-ից մինչև ապրիլի 30-ը:

Հաշվեքննության
մեթոդաբանությունը

Հաշվեքննությունն իրականացվել է «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ հաշվեքննիչ պալատի 2020թ հուլիսի 30-ի թիվ 132 –Լ որոշմամբ հաստատված «ՀՀ պետական բյուջեի երեք, վեց, ինն ամիսների և տարեկան կատարման հաշվեքննության ուղեցույց»-ի համաձայն:

Իրականացվել է ֆինանսական և համապատասխանության հաշվեքննություն, որի ընթացքում կիրառվել են հարցում, արտաքին հաստատում, վերլուծական ընթացակարգ, վերահաշվարկ և վերակատարում ընթացակարգերը:

Հաշվեքննությունն
իրականացրած
կառուցվածքային
ստորաբաժանում

Հաշվեքննությունն իրականացվել է ՀՀ հաշվեքննիչ պալատի չորրորդ վարչության կողմից, որի աշխատանքները համակարգում է ՀՀ հաշվեքննիչ պալատի անդամ Աբրամ Բախչագույանը:

2. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

1. **Նախարարություն** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության:

2. **Կոմիտե** – Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության Գիտության պետական կոմիտե:

3. **Ծրագիր 1** – (1162-11002) «Գիտական ենթակառուցվածքի պահպանում և զարգացում» ծրագիր:

4. **Ծրագիր 2** – (1162-12001) «Գիտաշխատողների գիտական աստիճանների համար տրվող հավելավճարներ» ծրագիր:

5. **Ծրագիր 3** – (1162 - 11005) «Գիտական և գիտատեխնիկական պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» ծրագիր:

6. **ԾՐԱԳՐԵՐ** – **Ծրագիր 1-ից Ծրագիր 9-ը** ներառյալ:

7. **ԳԱԱ** – Հայաստանի հանրապետության Գիտությունների Ազգային Ակադեմիա:

8. **ԵՊՀ** – Երևանի պետական համալսարան:

9. **ԱԱՀ** – Ավելացված արժեքի հարկ:

10. Հոդված 1 – (463700) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային ոչ առևտրային կազմակերպություններին»:

11. Հոդված 2 – (463900) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ»:

12. Հոդված 3 – (463500) «Այլ ընթացիկ դրամաշնորհներ համայնքներին»:

13. Հոդված 4 - (462100) «Ընթացիկ դրամաշնորհներ միջազգային կազմակերպություններին»:

14. Հոդված 5 – (463800) «Ընթացիկ դրամաշնորհներ պետական և համայնքային առևտրային կազմակերպություններին»:

3. ԱՄՓՈՓԱԳԻՐ

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐԻ շրջանակներում 2020թ. տարեկան պլանի և ճշտված պլանի ընդհանուր տարբերությունը կազմել է 472,149.5 հազ. դրամ, որը վերաբերում է Ծրագիր 1-ին՝ 68,249.5 հազ. դրամով և Ծրագիր 3-ին՝ 403,900.0 հազ. դրամով, ինչը պայմանավորված է առանց ընդհանուր գումարի փոփոխման հողվածային ճշգրտման հետևանքով կատարված ներքին տեղաշարժերի, ինչպես նաև պատերազմական իրավիճակով պայմանավորված բյուջեի որոշակի կրճատումներով:

Կոմիտեի 2020թ. ԾՐԱԳՐԵՐ-ում տարեկան ֆինանսավորումը կազմել է 10,080,211.6 հազ. դրամ, որը ճշտված պլանի (10,598,985.9 հազ. դրամ) նկատմամբ կազմել է 95,1 % կամ թերֆինանսավորումը՝ 518,774.3 հազ. դրամ: Կոմիտեի 2020թ. տարեկան ԾՐԱԳՐԵՐ-ի ճշտված պլանի հանդեպ թերֆինանսավորումները կապված են մի քանի հանգամանքների հետ (տես՝ Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

Կոմիտեի 2020թ. տարեկան Ծրագրերի ճշտված պլանի նկատմամբ
թերֆինանսավորման պատճառների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. տարեկան			Թերֆինանսավորման պատճառներ
		Ճշտված պլան	Ֆինան- սավորում	Թերֆինան- սավորում	
1	2	3	4	5	6
1	Ծրագիր 1	7,860,556.4	7,568,278.4	292,278.1	Պայմանավորված է կազմակերպությունների կողմից ներկայացվող հայտերով, որոնք տարվա ընթացքում ֆորսմաժորային հանգամանքներով ամբողջությամբ կամ մասամբ չեն իրականացվել:
2	Ծրագիր 2	842,000.0	740,909.8	101,090.2	Կարգի համաձայն ֆինանսավորումը տրվում է կազմակերպությունների կողմից ներկայացվող տվյալների հիման վրա:
3	Ծրագիր 3	1,896,429.5	1,771,023.4	125,406.1	Նախատեսված որոշ մրցույթներ ու չեն ամփոփվել, որոնց պատճառով ֆինանսավորումները չեն սկսվել սահմանված ժամկետներում:
Ընդամենը՝		10,598,985.9	10,080,211.6	-518,774.3	

Կոմիտեի 2020թ. տարեկան ԾՐԱԳՐԵՐ-ում ճշտված պլանի և դրամարկղային ծախսի (9,968,164.3 հազ. դրամ) միջև առաջացել է 630,821.6 հազ. դրամի տարբերություն, որը ընդհանուր թերֆինանսավորման և 2020թ. Կոմիտեի փաստացի ֆինանսավորման հանդեպ դրամարկղային ծախսի տարբերության՝ 112,047.3 հազ. դրամի (Ծրագիր 1-ով՝ 30,329.9 հազ. դրամ, Ծրագիր 2-ով՝ 1,148.0 հազ. դրամ և Ծրագիր 3-ով՝ 80,569.3 հազ. դրամ) հանրագումարն է: Կոմիտեի ճշտված պլանի հանդեպ կատարողականն ըստ դրամարկղային ծախսի կազմել է 95,1%, իսկ թերֆինանսավորման պայմաններում Կոմիտեի Ծրագրերով իրականացված միջոցառումների փաստացի կատարողականը կկազմի՝ 94,0%:

Ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի Կոմիտեի հաշվետու ժամանակաշրջանի փաստացի և դրամարկղային ծախսերի միջև առկա է 40,285.3 հազ. դրամի տարբերություն, որը ըստ Ծրագիր 1-ի կազմել է +51,767.1 հազ. դրամ, ըստ Ծրագիր 2-ի՝ -550.0 հազ. դրամ, իսկ ըստ Ծրագիր 3-ի՝ -10,931.8 հազ. դրամ (տես՝ Աղյուսակ 2):

Աղյուսակ 2

Կոմիտեի 2020թ. տարեկա ԾՐԱԳՐԵՐ-ում դրամարկղային և փաստացի ծախսերի, դեբիտորական և կրեդիտորական պարտքերի փոփոխությունների համամասնությունների և տարբերությունների վերաբերյալ

(հազ. դրամ)

Թիվ	Ծրագրեր	2020թ. տարեկան						
		Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	Տարբերություն (+, -)	Դեբիտորական պարտքերի աճ, նվազում (+, -)	Կրեդիտորական պարտքերի աճ, նվազում (+, -)	Բացարձակ շեղում (+, -)	Սյունակ 8 - Սյունակ 7 (+, -)
1	2	3	4	5	6	7	8	9
1	Ծրագիր 1	7,537,948.5	7,589,715.5	+ 51,767.1	(- 41,186.8)	+ 10,580.3	+ 51,767.1	0,0
2	Ծրագիր 2	739,761.8	739,211.8	-550.0	- 550.0	0.0	-550.0	0,0
1	2	3	4	5	6	7	8	9

4	Ծրագիր 3	1,690,454.1	1,679,522.3	-10,931.8	-10,931.8	0.0	-10,931.8	0,0
Ընդամենը՝		9,968,164.3	10,008,449.6	+ 40,285.3	(-29,705.0)	+ 10,580.3	+ 40,285.3	0,0

Կոմիտեի Ծրագիր 1-ում 2020թ. տարեկան փաստացի ծախսերի՝ 51,767.1 հազ. դրամով դրամարկղային ծախսերի գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Հոդված 1-ում դեբիտորական պարտքերն աճել են 55,333.2 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ զրոյական են:
- Հոդված 2-ում դեբիտորական պարտքերը նվազել են 96,146.3 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերի աճել են 10,580.3 հազ. դրամով:
- Հոդված 3-ում դեբիտորական պարտքերը նվազել են 373.7 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ զրոյական են:

Նշված հոդվածներում տարբերությունների մի մասը (կրեդիտորական պարտքերի աճերը) պայմանավորված են եղել ԳԱԱ-ի, այլ գիտական և գիտատեխնիկական կառույցների կողմից տարեվերջին, հիմնականում կոմունալ վճարների գծով պարտավորությունների նախատեսվածից՝ ավել չափերով, որոնց վճարումներն իրականացվել են 2021 թվականի հունվար ամսին: Հիմնական տարբերությունները վերաբերում են նաև տարեվերջին նախարարի հրամանով կազմակերպություններին գիտական սարքավորումների ձեռքբերման նպատակով հատկացված, սակայն տվյալ հաշվետու ժամանակաշրջանում չծախսված գումարների հետ, որոնց գնման գործընթացների կազմակերպումն ու կատարումը տեղափոխվել է հաջորդ տարի:

Կոմիտեի Ծրագիր 2-ում 2020թ. տարեկան դրամարկղային ծախսերի՝ 550.0 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումն արձանագրվել է Հոդված 2-ում, որտեղ դեբիտորական պարտքերն աճել են հիշյալ գումարով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ զրոյական են: Տարբերությունը պայմանավորված է ԵՊՀ կողմից ստացված գումարը աշխատակիցներին չվճարելու հանգամանքով, որը հետևանք է բուհի կողմից իրականացված վերահաշվարկների և ճշգրտումների: Արդյունքում չվճարված գումարը 2021 թվականին ետ է վերադարձվել պետական բյուջե:

Կոմիտեի Ծրագիր 3-ում 2020թ. տարեկան դրամարկղային ծախսերի՝ 10,931.8 հազ. դրամով փաստացի ծախսերի գերազանցումներն ըստ հոդվածների արձանագրվել են.

- Հոդված 1-ում դեբիտորական պարտքերը աճել են 83,456.4 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ զրոյական են:
- Հոդված 3-ում դեբիտորական պարտքերը նվազել են 72,524.6 հազ. դրամով, իսկ կրեդիտորական պարտքերը՝ զրոյական են:

Նշված հոդվածներում տարբերությունները պայմանավորված են որոշ մրցույթների արդյունքների ամփոփման և ֆինանսական միջոցների չորրորդ եռամսյակում տրամադրման ժամկետների հետ, ինչի հետևանքով գնման գործընթացների իրականացման համար սահմանված ժամանակահատվածի սղության պատճառով դրանք չեն ավարտվել նույն ֆինանսական տարում՝ տեղափոխվելով հաջորդ տարի:

Համաձայն ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական համակարգի տվյալների՝ Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի դեբիտորական պարտքերը տարեսկզբին կազմել են 775,434.7 հազ. դրամ, իսկ հաշվետու ժամանակաշրջանի ավարտին՝ կազմել են 745,749.2 հազ. դրամ, ընդհանուր աճը կազմել է 29,705.0 հազ. դրամ: ԾՐԱԳՐԵՐ-ում կրեդիտորական պարտքեր տարեսկզբի դրությամբ Կոմիտեն չի ունեցել, իսկ 2020թ. ավարտին դրանք կազմել են 10,580.3 հազ. դրամ:

4. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

Կոմիտեից պահանջվել է ամբողջական տեղեկատվության տրամադրում, որի ուսումնասիրությամբ, ինչպես նաև օգտվելով ՀՀ ֆինանսների նախարարության գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային («LSFINANCE» և «LSREP») համակարգերի շտեմարաններից, և հասանելի այլ պաշտոնական աղբյուրներից ստացվել է բավարար տեղեկատվություն սույն հաշվեքննությունն իրականացնելու համար:

Վերը նշվածը, ինչպես նաև ՀՀ տարածքում կորոնավիրուսային հիվանդությամբ (COVID-19) պայմանավորված հանգամանքները, զգալի դժվարություններ են առաջացրել հաշվեքննությունն ըստ ծրագրերի և միջոցառումների կատարման ռիսկերի ամբողջական և համակողմանի գնահատման գործընթացում: Հաշվի առնելով այդ հանգամանքը, 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան հաշվեքննության իրականացման համար որպես ռիսկային խնդիր է դիտարկվել՝ նախատեսված ծրագրերի և միջոցառումների մասով հաշվետու ժամանակահատվածի բյուջեի կատարողականի թերակատարումների և բյուջեի կատարողականի վերաբերյալ ՀՀ կառավարություն ներկայացրած հաշվետվություններում բերված ցուցանիշներում փաստացի կատարվածի իրական ծավալները մասնակի ընդգրկելու, իսկ որոշ դեպքերում առհասարակ չներառելու խնդիրները:

Կոմիտեի 2020 թվականի ՀՀ պետական բյուջեի տարեկան մուտքերի ձևավորման և ելքերի իրականացման կանոնակարգված գործունեության նկատմամբ իրականացված հաշվեքննության ընթացքում էական խեղաթյուրումներ չեն հայտնաբերվել, իսկ հայտնաբերված խեղաթյուրումները համատարած չեն ու հաշվեքննության առարկային վերաբերող հաշվետվությունները էականորեն խեղաթյուրված չեն:

5. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐՅԵԿՏԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

Նախարարության Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան շրջանակներում պլանը կազմել է 11,071,135.4 հազ. դրամ, իսկ ճշտված պլանը հաստատվել է 10,598,985.9 հազ. դրամ: Կոմիտեի ֆինանսավորումն ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի կազմել է 10,080,211.6 հազ. դրամ (տարեկան ճշտված պլանի 94,5 %-ը), իսկ 2020թ. տարեկան արդյունքներով ըստ ԾՐԱԳՐԵՐ-ի Կոմիտեի դրամարկղային ծախսը կազմել է 9,968,164.3 հազ. դրամ, փաստացի ծախսը՝ 10,008,449.6 հազ. դրամ: Կոմիտեի 2020թ. տարեկան ֆինանսական ամփոփ ցուցանիշները ներկայացված են աղյուսակ 3-ում, իսկ 2020թ. Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի ֆինանսական ամփոփ ցուցանիշները՝ աղյուսակ 4-ում:

Աղյուսակ 3

Կոմիտեի 2020թ. տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, (ծածկագիրը)	Տարեկան պլան	Փոփոխու- թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարության կողմից	Տարեկան ճշտված պլան	Կատարման %-ը տարեկան ճշտված պլանի նկատմամբ
Կոմիտե (105015)	14,128,041.3	(257,424.6)	13,870,616.7	94.5

Աղյուսակ 4

Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան ամփոփ ֆինանսական ցուցանիշներ

(հազար դրամ)

Ծրագրային բյուջետային ֆինանսավորման անվանումը, (ծածկագիրը)	2020 թվական տարեկան						Կատարման %-ը հաշվետու ժամանակաշրջանի ճշտված պլանի նկատմամբ
	Պլան	Փոփոխու- թյուններ տարեկան պլանում ՀՀ կառավարության	Ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս	
Կոմիտե (105015)	11,071,135.4	(472,149.5)	10,598,985.9	10,080,211.6	9,968,164.3	10,008,449.6	95,1

Թիվ	Հաշիվներ	Հաշվետու ժամանակահատվածի պլան	Հաշվետու ժամանակահատվածի ճշտված պլան	Ֆինանսավորում	Դրամարկղային ծախս	Փաստացի ծախս
Ծրագիր 1 (Կատարողական՝ 95,9 %)						
1	Հաշիվ 4	603,173.8	603,173.8	565,823.8	565,822.9	565,822.9
2	Հաշիվ 3	1,868.4	1,868.4	1,868.4	1,868.4	2,242.1
3	Հաշիվ 1	5,136,142.8	4,520,934.0	4,509,773.2	4,483,878.6	4,428,545.4
4	Հաշիվ 5	69,866.0	183,909.6	183,322.6	183,322.6	183,322.6
5	Հաշիվ 2	2,117,754.9	2,550,670.6	2,307,490.4	2,303,056.0	2,409,782.6
ԸՆԴԱՄԵՆԸ՝		7,928,805.9	7,860,556.4	7,568,278.3	7,537,948.4	7,589,715.5
Ծրագիր 2 (Կատարողական՝ 89,1 %)						
6	Հաշիվ 2	842,000.0	842,000.0	740,909.8	739,761.8	739,211.8
ԸՆԴԱՄԵՆԸ՝		842,000.0	842,000.0	740,909.8	739,761.8	739,211.8
Ծրագիր 3 (Կատարողական՝ 87,9 %)						
7	Հաշիվ 1	0.0	831,010.6	792,870.4	781,549.2	810,744.8
8	Հաշիվ 5	0.0	80,848.7	80,848.7	77,267.8	78,650.8
9	Հաշիվ 2	2,300,329.5	984,570.2	897,304.3	831,637.2	790,126.7
ԸՆԴԱՄԵՆԸ՝		2,300,329.5	1,896,429.5	1,771,023.4	1,690,454.1	1,679,522.3
ԱՄԲՈՂՋԸ՝		11,071,135.4	10,598,985.9	10,080,211.6	9,968,164.3	10,008,449.6

6. ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ

6.1 Կոմիտեի 2020թ. երեք ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.1.1 Կոմիտեի Ծրագիր 1-ի մասով չի օգտագործել գիտական ամսագրերի և մենագրությունների հրատարակման համար նախատեսված 9,497.4 հազ. դրամը: Առկա էր անհամապատասխանություն Նախարարության Կոմիտեի նախագահի 2019 թ. հուլիսի 22-ի թիվ 24-Ա/Ք հրամանի «Գիտական հրատարակումների համար ֆինանսական աջակցություն տրամադրելու, մրցույթի և գիտության մասսայականացման համար ֆինանսական աջակցություն տրամադրելու կարգ»-ի թիվ 1 Հավելվածի 2-րդ կետի պահանջների հետ:

6.1.2 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ով դեբիտորական և կրեդիտորական պարտքերը պայմանավորված են նախորդ տարի հաստատված, սակայն դեռևս չավարտված դրամաշնորհային պայմանագրերով՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ընթացակարգերին համապատասխան:

6.1.3 ԾՐԱԳՐԵՐ-ով Կոմիտեի կնքված դրամաշնորհային պայմանագրերով սահմանված ֆինանսավորումների գծով թերակատարումները պայմանավորված են մի շարք պայմանագրերի առաջին եռամսյակի ցածր կատարողականով: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի թիվ 1121 որոշմամբ հաստատված «Գիտական և գիտատեխնիկական բազային ֆինանսավորման» կարգի 13-րդ կետի պահանջների հետ:

6.1.4 Կոմիտեի գնումների գործընթացում մրցութային ընթացակարգեր չեն կազմակերպվել, պայմանագրերի հանձնման-ընդունման գործառույթը չի կազմակերպվել էլեկտրոնային համակարգի միջոցով և էլեկտրոնային գնումների համակարգում բացակայել են պատասխանատու ստորաբաժանման կողմից էլեկտրոնային ստորագրությամբ հաստատված եզրակացությունները և հանձնման-ընդունման արձանագրությունները: Առկա են անհամապատասխանություններ «Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ և 23-րդ հոդվածի 4-րդ կետի (16.12.2016թ.) և ՀՀ կառավարության 04.05.2017թվականի «Գնումների գործընթացի կազմակերպման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 526-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) պահանջների հետ:

6.1.5 Կոմիտեի կողմից «Procurement.am» տեղեկագրում (այսուհետ՝ Տեղեկագիր) չեն հրապարակվել գնման հրավերները և պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունները: Հրապարակվել են միայն կնքված պայմանագրի մասին հայտարարություններ՝ հիմնականում սահմանված ժամկետների ուշացումներով:

Առկա են անհամապատասխանություններ Օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի և Որոշման 7-րդ բաժնի 34-րդ կետի պահանջների հետ:

6.1.6 Կոմիտեում բացակայում են պատասխանատու ստորաբաժանման կողմից կազմվող և հաստատվող գնման հայտերը, ինչպես նաև՝ գնահատող հանձնաժողովի գործառույթները: Առկա է անհամապատասխանություն Որոշման 5-րդ բաժնի 21-րդ կետի 1-ին ենթակետի և 6-րդ բաժնի 30-րդ կետի պահանջների հետ:

6.1.7 Կոմիտեի կողմից՝ իբրև պատվիրատուի, տարեկան գնումների պլանով նախատեսված հեռախոսային ծառայությունների մասով 2020 թվականին գնում չի հայտարարվել, պայմանագիր չի կնքվել, շարունակել է օգտվել «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ի կողմից մատուցվող ծառայություններից՝ 2020 թվականի առաջին կիսամյակի ընթացքում վճարելով 425,3 հազ. դրամ գումար: Առկա է անհամապատասխանություն Օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի ա) ենթակետի, 3-րդ և 4-րդ կետերի պահանջների հետ:

6.1.8 Կոմիտեն թվով 2 չափաբաժիններով հայտարարված (ընդամենը՝ 1,240.0 հազ. դրամ) գնման ընթացքում չի սահմանել և չի պահպանել անգործության ժամկետը: Առկա է անհամապատասխանություն 10-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ և 5-րդ մասերի պահանջների հետ:

6.1.9 Կոմիտեն գնումների տարեկան պլանով նախատեսված մեկ չափաբաժինը տրոհել է մասերի՝ առանց գնումների պլանում փոփոխությունների կատարման և այդ չափաբաժնի համար նախատեսված ընդհանուր գումարից կատարել է գնում 40.0 հազ. դրամի չափով: Առկա է անհամապատասխանություն Որոշման 4-րդ բաժնի 16-րդ կետի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտը սույն ընթացիկ եզրակացության թիվ 6.1.1-ից թիվ 6.1.9 անհամապատասխանությունների վերաբերյալ առարկություններ չի ներկայացրել, տրվել են բացատրություններ և պարզաբանումներ:

6.2 Կոմիտեի 2020թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.2.1 Կոմիտեն իր իրավասության սահմաններում չափաբաժիններով միջհոդվածային և միջեռամսյակային վերաբաշխումը իրականացրել է առանց սահմանված կարգով ՀՀ ֆինանսների նախարարություն ծանուցելու: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության 2020 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» թիվ 1919-Ն որոշման 12-րդ հավելվածի 5-րդ կետով սահմանված կարգի պահանջների հետ:

6.3 Կոմիտեի 2020թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր, որ.

6.3.1 Կոմիտեի Ծրագիր 3-ում ներառված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» ենթածրագրի վերաբերյալ հաշվեքննության համար անհրաժեշտ և «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվությունը ՀՀ հաշվեքննիչ պալատի կողմից պահանջվել է, սակայն ստացվել է թերի: Չեն տրամադրվել հայտատու և հաղթած մասնակիցների զբաղեցրած պաշտոնների և գիտական աստիճանների մասին պահանջվող տվյալները, որոնք առկա են ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 568-Ա/2 հրամանով հաստատված հավելված 2-ի (ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1518-Ա/2 հրամանի) գլուխ 3 «Հայտերի լրացման և ներկայացման կարգ»-ի թիվ 3.3 կետով սահմանված կազմակերպությունների ղեկավարների կողմից ստորագրված և կնքված տիտղոսաթերթերում: Առկա է անհամապատասխանություն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018 թվականի հունիսի 6-ի թիվ 568-Ա/2 հրամանով հաստատված հավելված 2-ի (ըստ ՀՀ կրթության և գիտության նախարարի 2017թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1518-Ա/2 հրամանի) գլուխ 3 «Հայտերի լրացման և ներկայացման կարգ»-ի պահանջների հետ:

6.3.2 Ծրագիր 3-ում Կոմիտեի «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներ» բաժնով հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած գիտաշխատողների բազաներում ընդգրկված երկու, իրար հաջորդող ժամանակահատվածների համադրումներով ընդհանուր հաղթած թվով 35 կազմակերպություններից թվով 25-ում առկա են համընկնումներ (71,4%), իսկ գիտաշխատողների ցանկում՝ հաղթած 102-ից համընկնում են թվով 80 գիտաշխատողներ (78,4%): Առկա են անհամապատասխանություններ ՀՀ կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1122-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետ, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ. դեկտեմբերի 26-ի թիվ 1518-Ա/2 հրամանի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019թ. օգոստոսի 23-ի թիվ 557-Ա/2 հրամանի պահանջների հետ:

6.3.3 «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ (մինչև 35 տարեկան)» բաժնով հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած երիտասարդ գիտաշխատողների բազաներում ընդգրկված երկու, իրար հաջորդող ժամանակահատվածների համադրումներով ընդհանուր հաղթած թվով 18 կազմակերպություններից 9-ում (50,0%) առկա են համընկնումներ, իսկ երիտասարդ գիտաշխատողների ցանկում հաղթած թվով 25-ից համընկնում են թվով 14-ը (56,0%): Առկա են անհամապատասխանություններ ՀՀ

կառավարության 2001թ. նոյեմբերի 17-ի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորման կարգը հաստատելու մասին» թիվ 1122-Ն որոշմամբ հաստատված կարգի 3-րդ կետի, ՀՀ կրթության և գիտության նախարարի 2018թ. մարտի 17-ի թիվ 239-Ա/2 հրամանի և ՀՀ կրթության և գիտության նախարարի 2019թ. օգոստոսի 23-ի թիվ 553-Ա/2 հրամանի պահանջների հետ:

Հաշվեքննության օբյեկտը սույն ընթացիկ եզրակացության թիվ 6.1.1-ից թիվ 6.3.3 անհամապատասխանությունների վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.4 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան (չորրորդ եռամսյակ) հաշվեքննությամբ պարզվեց, որ.

6.4.1 2020թ. հունվարի 8-ին Կոմիտեի և թվով 79 կազմակերպությունների միջև կնքված պայմանագրերի ընդհանուր տարեկան արժեքը կազմել է 741,559.8 հազ. դրամ, իսկ տարվա ընդհանուր վճարումները՝ 739,450.0 հազ. դրամ, տարբերությունը՝ 2,109.8 հազ. դրամ: Հաշվեքննությամբ պարզվեց, որ Կոմիտեի՝ կազմակերպությունների հետ կնքված թվով 33 պայմանագրերում պայմանագրային արժեքների և փաստացի կատարված վճարումների միջև տարբերություններ չեն առաջացել: Թվով 21 կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով տարեկան վճարումներն ընդհանուր 2,865.2 հազ. դրամով գերազանցել են պայմանագրերով սահմանված գումարներին, իսկ թվով 25 կազմակերպություններում տարեկան կատարված փաստացի վճարումները 4,975.0 հազ. դրամով պակաս են պայմանագրերով սահմանված գումարներից: Արդյունքում, հանրագումարային առումով ընդհանուր տարբերությունը մնացել է անփոփոխ ($4,975.0 - 2,865.2 = 2,109.8$): Կոմիտեի հետ կազմակերպությունների կնքված թվով 46 ($21 + 25$) պայմանագրերում գիտական կառույցների միջև պայմանագրային արժեքների և փաստացի վճարումների միջև առկա են տարբերություններ:

Հաշվեքննության օբյեկտի առարկությամբ նշվել է, որ «... այն պայմանավորված է տվյալ կազմակերպություններում հաշվետու տարվա ընթացքում դոկտորների և թեկնածուների գիտական աստիճան ունեցող նոր աշխատակիցների ներգրավմամբ (գիտական աստիճան ունեցող աշխատակիցները կարող էին տարվա ընթացքում ներգրավվել թե բազային և նպատակային ծրագրերում աշխատանքի անցնելով, թե տարվա ընթացքում մեկնարկող նոր թեմատիկ ծրագրերում ձևավորված խմբերի կազմում): Միևնույն ժամանակ թվով 25 կազմակերպություններում տարեկան կատարված փաստացի վճարումները 4,975.0 հազ. դրամով պակաս են պայմանագրերով սահմանված գումարներից, ինչը դարձյալ պայմանավորված է տվյալ կազմակերպություններում հաշվետու տարվա ընթացքում դոկտորների և թեկնածուների գիտական աստիճան ունեցող աշխատակիցների աշխատանքից

ազատմամբ (գիտական աստիճան ունեցող աշխատակիցները կարող էին տարվա ընթացքում ազատվել թե՛ բազային և նպատակային ծրագրերում իրենց աշխատանքից, թե՛ տարվա ընթացքում ավարտվող թեմատիկ ծրագրերից)»:

Հաշվեքննողների կողմից առարկությունը չի ընդունվում: Կոմիտեի կողմից պայմանագրերով գիտությունների դոկտորներին և թեկնածուներին տարբեր բազային և նպատակային ծրագրերում աշխատանքի հաճախակի ընդունման կամ ազատման դեպքերով պայմանավորված վճարված գումարների տարբերությունները հիմնավորված չեն:

6.4.2 Ի լրումն սույն ընթացիկ եզրակացության՝ 6.3.2 ենթակետի անհամապատասխանության, հաշվեքննությամբ լրացուցիչ պարզվեց նաև, որ համեմատվող ժամանակաշրջանների կրկնակի հաղթած գիտաշխատողների կազմում թվով 53-ը կամ 66%-ը գիտական և գիտատեխնիկական հաստատություններում զբաղեցնում են ղեկավար պաշտոններ՝ առանց հաշվի առնելով գիտական աստիճանների հանգամանքը: Ինչ վերաբերվում է այն թվով 20 գիտաշխատողներին, ովքեր հաղթել են միայն 2019-2020թթ. մրցույթներում, ապա նրանցից թվով 4-ը տնօրեններ են (20,0 %), թվով 1-ը՝ դեկան (5,0 %), թվով 2-ը՝ ամբիոնի վարիչներ են (10,0 %), իսկ թվով 4-ը՝ զբաղեցնում են տարբեր վարչական պաշտոններ, մասնավորապես՝ փոխտնօրեն, բաժնի, բաժանմունքի կամ լաբորատորիայի ղեկավարներ (20,0 %):

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

6.4.3 Ի լրումն սույն ընթացիկ եզրակացության՝ 5.3.3 ենթակետի անհամապատասխանության, հաշվեքննությամբ լրացուցիչ պարզվեց նաև, որ մինչև 35 տարեկան «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ» բաժնում 2018-2020թթ. մրցույթներում հաղթած և ըստ քննարկվող ժամանակաշրջանների կրկնվող թվով 14 բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներից (անկախ գիտական աստիճանների) թվով 5-ը (35,7%) զբաղեցնում են ղեկավար պաշտոններ, այդ թվում ամբիոնի վարիչներ, բաժնի, բաժանմունքի և այլ ենթակառուցվածքների ղեկավարներ, իսկ մնացած 9-ը (64,3%) շարքային երիտասարդ գիտաշխատողներ են: Նոր մրցույթներում հաղթած թվով 11 երիտասարդ նոր գիտաշխատողներից թվով 3-ը (27,0 %) ևս զբաղեցնում են տարբեր վարչական պաշտոններ (20,0 %):

Հաշվեքննության օբյեկտն առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

7. ՀԱՇՎԵՔՆՆՈՒԹՅԱՄԲ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԱՅԼ ՓԱՍՏԵՐ

7.1 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. վեց ամիսների հաշվեքննությամբ պարզվել էր որ.

7.1.1 Կոմիտեի Ծրագիր 2-ում 2020թ. առաջին կիսամյակում նախատեսված 82 կազմակերպություններից ֆինանսավորվել են 78-ը, որից թվով 32 գիտական և գիտատեխնիկական հաստատություններում հայտնաբերվել են հետևյալ տարբերությունները.

Թվով 545 գիտությունների դոկտորներից 6-ը 13 տարբեր ամիսներ կազմակերպությունների կողմից ներկայացված ամսեկան հայտերով ընդգրկվել են վճարման ցանկերում՝ լրացուցիչ ստանալով 650,000.0 ՀՀ դրամ, զուգահեռ, թվով 18 գիտությունների դոկտորներ 21 տարբեր ամիսներ բացակայել են ցանկերից՝ համապատասխանաբար տնտեսելով 1,050,000.0 ՀՀ դրամ: Տնտեսված տարբերությունը կազմել է 400,000.0 ՀՀ դրամ: Թվով 1420 գիտությունների թեկնածուներից 25-ը 72 տարբեր ամիսներ լրացուցիչ ընդգրկվել են ցանկերում՝ ստանալով 1,800,000.0 ՀՀ դրամ, իսկ թվով 25 թեկնածուներ 56 տարբեր ամիսներ բացակայել են ցանկերից՝ տնտեսելով՝ 1,400,000.0 ՀՀ դրամ: Տարբերությունը գերաժախսով կազմել է 400.000 ՀՀ դրամ:

Արդյունքում, ըստ Կոմիտեի կողմից ներկայացված հաշվետվության առաջացած շեղումների՝ գիտությունների դոկտորներին հաշվարկված և ամսեկան կտրվածքներով վճարված 400,000.0 ՀՀ դրամ գումարների տնտեսման տարբերությունը փակվել է գիտությունների թեկնածուներին հաշվարկված և ամսեկան կտրվածքներով վճարված նույն չափի գումարների գերաժախսով:

7.1.2 Կոմիտեի 2020թ. առաջին կիսամյակում Ծրագիր 2-ով նախատեսված «Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն» միջոցառումների թվով 13 ուղղություններից 7-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ՝ 626,762.6 հազ. դրամ գումարի շրջանակներում: Հաշվեքննությամբ պարզվել էր, որ մասնավորապես՝

- «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումներ» ենթածրագրով նախատեսված 30 միջոցառման փոխարեն իրականացվել է 1-ը, իսկ «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցներ» ենթածրագրով՝ նախատեսված 15-ից 1-ը: Ինչ վերաբերում է «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոններ» ենթածրագրին, ապա

նախատեսված մեկ միջոցառումը չի իրականացվել: Հաշվեքննության օբյեկտը վերոհիշյալ երեք ենթաձրագրերով քանակագումարային տարբերությունները հետաձգել և իրականացումը տեղափոխել է հաջորդ եռամսյակներ:

- «Գիտական գործուղմներ» ենթաձրագրով նախատեսված 50 միջոցառումները չեն իրականացվել համավարակով պայմանավորված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով:
- Նախատեսված թվով 1200 «Գիտական հայտերի փորձաքննություններ» ենթաձրագրով իրականացվել են 57-ը, իսկ «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպություններ» ենթաձրագրով նախատեսված թվով 3 միջոցառումները չեն իրականացվել կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով:
- Թվով 1183 «Անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավում» ենթաձրագրով իրականացվել է ընդամենը 16-ը, որը պայմանավորված է թեմատիկ հետազոտությունների իրականացման հետաձգմամբ:

7.2 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. ինն ամիսների հաշվեքննությամբ պարզել էր որ.

7.2.1 Կոմիտեի 2020թ. ինն ամիսների Ծրագիր 1-ով նախատեսված «Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն» միջոցառումների թվով 13 ուղղություններից 7-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ՝ 773,770.1 հազար դրամ գումարի շրջանակներում: Հաշվեքննությամբ պարզվել էր, որ մասնավորապես՝

- «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված գիտական միջոցառումներ» ենթաձրագրով նախատեսված 30 միջոցառման փոխարեն իրականացվել է 1-ը, իսկ «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցներ» ենթաձրագրով՝ նախատեսված 15-ից 1-ը: Ինչ վերաբերում է «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոններ» ենթաձրագրին, ապա նախատեսված մեկ միջոցառումը չի իրականացվել: Հաշվեքննության օբյեկտը վերոհիշյալ երեք ենթաձրագրերով քանակագումարային տարբերությունները հետաձգել և իրականացումը տեղափոխել է 2020թ. չորրորդ եռամսյակ:

- «Գիտական գործուղումներ» ենթաժրագրով նախատեսված թվով 50 միջոցառումներից իրականացվել է 1-ը՝ համավարակով պայմանավորված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով:

- Նախատեսված թվով 1200 «Գիտական հայտերի փորձաքննություններ» ենթաժրագրով իրականացվել են 300-ը, իսկ «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպություններ» ենթաժրագրով նախատեսված թվով 3 միջոցառումները չեն իրականացվել՝ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով:

- Թվով 1183 «Անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավում» ենթաժրագրով իրականացվել է ընդամենը 220-ը, որը պայմանավորված է թեմատիկ հետազոտությունների իրականացման հետաձգմամբ:

7.2.2 Կոմիտեի Ծրագիր 2-ի հաշվեքննությամբ պարզել էր, որ 2020թ. ինն ամիսների 85,150.0 հազ. դրամ տնտեսումը պայմանավորված է թեմաներում ընդգրկված գիտաշխատողների՝ գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ ստացող անձանց փաստացի թվաքանակների նվազմամբ:

7.2.3 Կոմիտեի Ծրագիր 3-ի հաշվեքննությամբ պարզել էր, որ 2020թ. ինն ամիսների 195,537.1 հազ. դրամի տնտեսումը պայմանավորված է մի շարք թեմաների ավարտով և անցկացված նոր մրցույթները ամփոփված չլինելու հանգամանքներով: Ծրագիր 3-ով նախատեսված «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտություններ» միջոցառումների թվով 7 ուղղություններից 2-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ.

- «Թեմաների թիվ» ենթաժրագրով նախատեսված թվով 270 թեմաների փոխարեն իրականացվել է 244-ը, որը պայմանավորված մի շարք թեմաների ավարտմամբ, ինչպես նաև հանրապետությունում արտակարգ իրավիճակով:

- «Նոր ստեղծված հետդոկտորական ծրագրերի թիվ» ենթաժրագրով նախատեսված թվով 20 ծրագրերի փոխարեն իրականացվել է 10-ը՝ պայմանավորված հետդոկտորական ծրագրերի փաստացի թվով:

7.2.4 Կոմիտեի Ծրագրերում 2020թ. ինն ամիսներին ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած ընդհանուր 1,354,457.2 հազ. դրամի տարբերության, ճշտված պլանի ու դրամարկղային ծախսի միջև առաջացած ընդհանուր 1,383,963.1 հազ. դրամի տարբերության բացարձակ շեղումը՝ 29,505.9

հազ. դրամը (Ծրագիր 1-ով՝ 1,848.0 հազ. դրամ և Ծրագիր 3-ով՝ 27,656.9 հազ. դրամ) տեխնիկական պատճառով ավել բացված ֆինանսավորման արդյունք է, որը չի ուղղվել դրամարկղային ծախսին և ձևակերպվել որպես մնացորդ:

7.3 Կոմիտեի ԾՐԱԳՐԵՐ-ի 2020թ. տարեկան (չորրորդ եռամսյակ) հաշվեքննությամբ պարզվեց, որ.

7.3.1 Կոմիտեի Ծրագիր 2-ում 2020թ. տարեկան ֆինանսավորման և դրամարկղային ծախսերի միջև առաջացած 1,148.0 հազ. դրամ (739,761.8 – 740,909 .8) և Ծրագիր 3-ում՝ 80,569.3 հազ. դրամ (1,690,454.1–1,771,023.4) տարբերությունները պայմանավորված են կազմակերպությունների կողմից չծախսված գումարների ետ վերադարձով, որոնք մինչև տարեվերջ մնացել են Կոմիտեի գանձապետական հաշվում: Հաշվեքննության օբյեկտը նշված տարբերությունները պատճառաբանել է իբրև տեխնիկական պատճառներով գումարների գրոյացման անհնարինություն, որը հաշվեքննողների կողմից դիտարկվել է որպես գանձապետական հաշիվներում առանց հիմնավորման պահվող գումարների՝ գործող իրավակարգավորումներով ֆինանսական միջոցների չհիմնավորված տնտեսում: Նշված գումարները տարեվերջում Կոմիտեն ամփոփել և ետ է վերադարձրել բյուջե:

7.3.2 Կոմիտեի 2020թ. տարեկան Ծրագիր 1-ով նախատեսված «Գիտական կազմակերպությունների և բուհերի գիտական ստորաբաժանումների զարգացում, ծրագրերի իրականացում, գիտական սարքավորումների արդիականացում, միջազգային համագործակցության աջակցություն» միջոցառումների թվով 13 ուղղություններից 8-ում արձանագրվել են քանակական էական տարբերություններ՝ 322,607.9 հազ. դրամ գումարի շրջանակներում: Հաշվեքննությամբ պարզվեց, որ մասնավորապես Կոմիտեի Ծրագիր 1-ում՝

7.3.2.1 «Պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցներ» ենթածրագրով նախատեսված թվով 12 միջոցառումների փոխարեն իրականացվել է 1-ը, ինչը պայմանավորված է պետական բյուջեից ֆինանսավորման երաշխավորված երիտասարդ գիտնականների դպրոցների փաստացի թվով:

7.3.2.2 «Գիտական գործուղումներ» ենթածրագրով նախատեսված թվով 47 միջոցառումներից իրականացվել է թվով 1-ը՝ համավարակով պայմանավորված հանրապետությունում հայտարարված արտակարգ դրության պատճառով:

7.3.2.3 Նախատեսված թվով 300 «Գիտական հայտերի փորձաքննություններ» ենթածրագրով միջոցառումներից իրականացվել են 200-ը, որը պայմանավորված է «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի

արդիականացում» ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպությունների թվի նվազմամբ:

7.3.2.4 Թվով 1714 «Անկախ փորձագետների (այդ թվում՝ արտասահմանյան) ներգրավվում» ենթածրագրով միջոցառումներից իրականացվել է ընդամենը 703-ը, իսկ «Փորձաքննության աշխատանքների կազմակերպման համար ստեղծված հանձնախմբեր» ենթածրագրով նախատեսված թվով 13 հանձնախմբերի փոխարեն կազմավորվել է թվով 11-ը: Տարբերությունները պայմանավորված են թեմատիկ հետազոտությունների իրականացման հետաձգմամբ:

7.3.2.5 «Գիտության ոլորտում ենթակառուցվածքի, նյութատեխնիկական բազայի արդիականացում ծրագրով պետական աջակցություն ստացած կազմակերպություններ» ենթածրագրով միջոցառումներից նախատեսված թվով 13 միջոցառումներից իրականացվել են 4-ը՝ կազմակերպությունների կողմից ներկայացված հայտերի բացակայության պատճառով:

7.3.2.6 «Գիտական կենտրոնների ստեղծում և տեխնոլոգիական հետազոտական համալսարանի պիլոտային ծրագրի իրականացում ծրագրով աջակցություն ստացած գիտական կենտրոններ» ենթածրագրով միջոցառումներից նախատեսված մեկ միջոցառումը չի իրականացվել կապված երկրում հայտարարված արտակարգ դրությամբ:

7.3.2 Կոմիտեի 2020թ. տարեկան Ծրագիր 2-ով նախատեսված «Պետական ծրագրերում ընդգրկված գիտական աստիճան ունեցող գիտաշխատողներին հավելավճարների տրամադրում» միջոցառումներով թվով 82 կազմակերպությունների ֆինանսավորման ժամանակ առաջացել է 102,238.3 հազ. դրամ գումարի տնտեսում, որը պայմանավորված է թեմաներում ընդգրկված գիտաշխատողների քանակի նվազմամբ:

7.3.3 Կոմիտեի 2020թ. տարեկան Ծրագիր 3-ով տնտեսված ընդամենը 205,975.4 հազ. դրամը պայմանավորված է հանրապետությունում արտակարգ իրավիճակով, որի պատճառով գիտահետազոտական թեմաներում գիտաժողովների և գործուղումների համար նախատեսված միջոցները չեն օգտագործվել, իսկ «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) հետազոտությունների թեմաներ» ենթածրագրով նախատեսված թվով 270 թեմաների փոխարեն իրականացվել է 320-ը՝ 50-ով ավելի: «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» ենթածրագրով նախատեսված թվով 120 գիտաշխատողի փոխարեն ընդգրկվել են 98-ը՝ ըստ կազմակերպությունների կողմից փաստացի ներկայացված հայտերի քանակի:

7.3.4 Կոմիտեի Ծրագիր 3-ում թվով 13 թեմաներում ընդգրկվել են ընդհանուր 1411 գիտաշխատողներ, որոնցից 208-ը կամ 14,7%-ն են հանդիսանում բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներ, իսկ նշված թեմաներում «Միջազգային ճանաչում ունեցող խմբի ղեկավարներ» բաղադրիչով գիտաշխատողները բացակայում են: Անհրաժեշտություն է առաջանում տալ պարզաբանումներ Կոմիտեի Ծրագիր 3-ի թեմաներում ընդգրկված «Միջազգային ճանաչում ունեցող խմբի ղեկավարներ» առանձնացված կարգավիճակով ցուցանիշի սահմանման և վերջինիս կիրառելիության վերաբերյալ:

Հաշվեքննության օբյեկտն ընդունել է արձանագրված փաստը և քննարկում է նշված ոչ ֆինանսական ցուցանիշի հետագա կիրառման նպատահարմարությունը:

7.3.5 Կոմիտեի 2019թ. և 2020թ. տարեկան ծախսերի համեմատությամբ «Թեմատիկ մրցույթներով հաղթող ճանաչված խմբերի ֆինանսավորման» մասով աճը կազմել է 20,769.4 հազ. դրամ (1,203,212.2– 1,182,442.8) կամ՝ 1,8 %, ընդ որում նպատակային ծրագրերում աճը կազմում է 7,840.0 հազ. դրամ (132,840.0 – 125,000.0) կամ՝ 6,3%, իսկ ազգային արժեք ներկայացնող օբյեկտների ծրագրերում՝ 12,929.4 հազ. դրամ (1,070,372.2 – 1,057,442.8) կամ՝ 1,2%:

Հաշվեքննության օբյեկտը հաշվեքննությամբ արձանագրված վերոհիշյալ այլ փաստերի վերաբերյալ առարկություններ և բացատրություններ չի ներկայացրել:

8. Հ Ե Տ Հ Ս Կ Ո Ղ Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ Ը Ն Թ Ա Ց

ԱՆՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ, ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱՑՄԱՆ, ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԵՎ ԸՆԹԱՑԻԿ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆԸ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԱՅԼ ԳՐԱՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴԻՄԱՆ ՁԵՎԱԶԱՓ

Թիվ	Առաջարկություններ	Ընդունելի է/ Ընդունելի չէ	Կարգավիճակ /շտապարկում/	Հիմնավորումներ
Անհամապատասխանությունների վերացման առաջարկություններին վերաբերող մասով				

1	Քննարկել և լուծումներ առաջարկել Ծրագիր 3-ում ներառված «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների թվաքանակ» և «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ (մինչև 35 տարեկան)» ենթաբաժիններում հայտեր ներկայացրած կազմակերպությունների և հաղթած, ինչպես երիտասարդ, այնպես էլ այլ գիտաշխատողների, հաջորդող ժամանաշրջաններում կազմակերպությունների զգալի չափով համընկնումների, հաղթած հայտատուների կրկնվող բազմաթիվ դեպքերի հարցերի վերաբերյալ:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Կոմիտեի նախագահի 2021 թվականի մարտի 10-ի թիվ 9/9.3/4432-21 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) հայտվել է, որ արդյունավետ գիտաշխատողների մրցույթը միտված է գործունեության որոշակի ժամանակահատվածում բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողների խրախուսմանը և ցանկում հնարավոր և օրինաչափ են համընկնումները: Միաժամանակ, հայտնվել է, որ 2021թ. մրցույթի հրավերներով նախատեսվել է գնահատել գիտնականների վերջին 5 տարիների գործունեությունը (գործող, նախորդ տարիների 10 տարվա փոխարեն), որը չնայած չի բացառի կրկնությունները, սակայն կստացվեն որոշակի դիվերսիֆիկացված ցանկեր: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
2	Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնցով կբացառվեն կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքներով ճշտված պլանների նկատմամբ դրամարկղային և փաստացի ծախսերի միջև տարբերությունները, տեխնիկական պատճառներով ավել բացված ֆինանսավորումները և որպես մնացորդ դրանց ձևակերպումները:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ նշված խնդիրը պայմանավորված է 2020թ. կորոնավիրուսի և պատերազմի հետևանքով մի շարք գիտական միջոցառումների չիրականացմամբ, ինչը բնականաբար հանգեցրել է որոշ արդյունքային ցուցանիշների թերակատարման: Կոմիտեի նախագահի հրամանով կիրականացվեն գործող իրավակարգավորումների սահմաններում ավելի բարձր վերահսկողություն ոչ ֆինանսական ցուցանիշների ապահովման ուղղությամբ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
3	Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն կազմակերպությունների կողմից հաստատված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների էական թերակատարումները, դրանց հետևանքներով ձևավորված տնտեսումները, ցածր կատարողականները, միջոցառումների չիրականացումները կազդեն հաջորդ ժամանակահատվածների հաստատվող նախահաշիվների, ֆինանսական հայտերի ընդունման և բյուջետային ֆինանսավորման ցուցանիշների վրա:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ պահանջված տվյալների մի մասը չի հավաքագրվել մրցույթի շրջանակներում, քանի որ դրանք ազդեցություն չունեն մրցույթի արդյունքների վրա: Կոմիտեի նախագահի հրամանով սահմանվել են ստորաբաժանումների տնօրինության տակ առկա տվյալների պատշաճ տրամադրման հստակ պահանջներ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
Ընթացիկ եզրակացության այլ գրավոր տեղեկատվության վերաբերող մասով				

4	Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն կազմակերպությունների կողմից ֆինանսական և ոչ ֆինանսական ցուցանիշների էական տարբերությունները:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ նշված խնդիրը պայմանավորված է 2020թ. կորոնավիրուսի և պատերազմի հետևանքով մի շարք գիտական միջոցառումների չիրականացմամբ, ինչը բնականաբար հանգեցրել է որոշ արդյունքային ցուցանիշների թերակատարման: Կոմիտեի նախագահի հրամանով կիրականացվեն գործող իրավակարգավորումների սահմաններում ավելի բարձր վերահսկողություն ոչ ֆինանսական ցուցանիշների ապահովման ուղղությամբ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
5	Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնց միջոցով կհսկվեն Կոմիտեի Ծրագիր 2-ի թեմաներում ընդգրկված գիտաշխատողների՝ գիտական աստիճանի համար տրվող հավելավճարներ ստացող անձնաց փաստացի թվաքանակները:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ պահանջված տվյալների մի մասը չի հավաքագրվել մրցույթի շրջանակներում, քանի որ դրանք ազդեցություն չունեն մրցույթի արդյունքների վրա: Կոմիտեի նախագայի հրամանով սահմանվել են ստորաբաժանումների տնօրինության տակ առկա տվյալների պատշաճ տրմադրման հստակ պահանջներ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
6	Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն Կոմիտեի Ծրագիր 3-ի թեմաների ավարտման և անցկացված նոր մրցույթները ամփոփման ժամկետները, ինչպես նաև ոչ ֆինանսական ցուցանիշների էական տարբերությունները:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ պահանջված տվյալների մի մասը չի հավաքագրվել մրցույթի շրջանակներում, քանի որ դրանք ազդեցություն չունեն մրցույթի արդյունքների վրա: Կոմիտեի նախագայի հրամանով սահմանվել են ստորաբաժանումների տնօրինության տակ առկա տվյալների պատշաճ տրմադրման հստակ պահանջներ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
7	Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնց միջոցով կհսկվեն Կոմիտեի Ծրագիր 3-ի «Բարձր արդյունավետությամբ աշխատող գիտաշխատողներ» և «Բարձր արդյունավետությամբ աշխատող երիտասարդ գիտաշխատողներ (մինչև 35 տարեկան)» բաժիններով 2018–2020 թթ. մրցույթների հայտագրման, անցկացման և հաղթողների ճանաչման ժամանակ համընկնումների և կրկնվող դեպքերի էական քանակությունները:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ պահանջված տվյալների մի մասը չի հավաքագրվել մրցույթի շրջանակներում, քանի որ դրանք ազդեցություն չունեն մրցույթի արդյունքների վրա: Կոմիտեի նախագայի հրամանով սահմանվել են ստորաբաժանումների տնօրինության տակ առկա տվյալների պատշաճ տրմադրման հստակ պահանջներ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:

9	Կոմիտեի Ծրագրերում 2020թ. ինն ամիսներին ճշտված պլանի և ֆինանսավորման միջև առաջացած ընդհանուր 1,354,457.2 հազ. դրամ տարբերության, ճշտված պլանի ու դրամարկղային ծախսի միջև առաջացած ընդհանուր 1,354,457.2 հազ. դրամ տարբերության բացարձակ շեղումը՝ 29,505.9 հազ. դրամը (Ծրագիր 1-ով՝ 1,848.0 հազ. դրամ և Ծրագիր 3-ով՝ 27,656.9 հազ. դրամ) տեխնիկական պատճառով ավել բացված ֆինանսավորման արդյունք է, որը չի ուղղվել դրամարկղային ծախսին և ձևակերպվել՝ որպես մնացորդ:	«Ընդունված է»	«Ընթացքում է»	Գրությամբ հայտվել է, որ պահանջված տվյալների մի մասը չի հավաքագրվել մրցույթի շրջանակներում, քանի որ դրանք ազդեցություն չունեն մրցույթի արդյունքների վրա: Կոմիտեի նախագայի հրամանով սահմանվել են ստորաբաժանումների տնօրինության տակ առկա տվյալների պատշաճ տրամադրման հստակ պահանջներ: Ժամկետ՝ 2021թ. տարեվերջ:
---	---	---------------	---------------	---

2020թ. հաշվեքննությունների ընթացքում արձանագրված թվով 27 անհամապատասխանություններից և այլ փաստերից թվով 18 վերաբերյալ հաշվեքննության օբյեկտը չի արձագանքել, այսինքն՝ ընդունվել է ի գիտություն: Կոմիտեն արձագանքել է թվով 9-ին, այդ թվում՝ ներկայացնելով թվով 8 առարկություններ և թվով 1 պարզաբանում, որով Կոմիտեն ընդունել է արձանագրվածը:

Կոմիտեի կողմից թվով 8 առարկություններից հաշվեքննողները ընդունել են թվով 3-ը, մասամբ ընդունվել է թվով 3-ը: Կոմիտեի թվով 2 առարկություններ չեն ընդունվել, քանի որ ներկայացրած առարկություններն ըստ էության կրում են պարզաբանման և բացատրական համատեքստեր:

9. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առաջարկվում է Կոմիտեին.

9.1 Քննարկել և լուծումներ առաջարկել Կոմիտեի և գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների միջև կնքվող պայմանագրերի շրջանակներում սահմանված տարեկան ընդհանուր գումարների և կատարվող վճարումների համամասնությունների պահպանման ուղղությամբ: Մասնավորապես, անհրաժեշտ է ստեղծել գործիքակազմեր և վերահսկողական մեխանիզմներ բազային և նպատակային ծրագրերում ընդգրկված կազմակերպությունների գիտությունների դոկտորների և թեկնածուների աստիճան ունեցող աշխատակիցների՝ հիշատակված ծրագրերից օգտվելու նպատակով, ուղղորդված աշխատանքի ընդունման և ազատման միտումները կանխելու նպատակով:

9.2 Ներդնել այնպիսի հսկողական գործառույթներ, որոնց կիրառումը կնպաստի բարձր արդյունավետությամբ աշխատող շարքային երիտասարդ և այլ գիտաշխատողների խրախուսմանը միտված մրցույթներում հաղթելը և կբացառի հետագա մրցույթներում հնարավոր հաղթող հայտատուների կազմում գիտության բնագավառի տարբեր վարչական ղեկավարների տեսակարար կշռի ակնառու բարձր մակարդակը:

9.3 Ուսումնասիրել, վերլուծել, մոնիթորինգի ենթարկել և ամփոփել Կոմիտեի հետ կնքված պայմանագրերով գիտական, գիտատեխնիկական կազմակերպությունների կողմից 2020թ. համավարակով, ռազմական դրությամբ և հեռավար սկզբունքով աշխատանքների կազմակերպման պայմաններում տարեկան կատարված ծախսերը: Մասնավորապես, տալ կոմանալ վճարների, գրասենյակային, ծառայությունների մատուցման և այլ ծախսերի գծով ներկայացված գումարների տնտեսման կամ գերածախսերի (բացի՝ աշխատավարձերը, գործուղումները և այլն) հիմնավորումները: Բացահայտել ինչպես 2020թ. տարեկան 100% ֆինանսավորման, այնպես էլ՝ նախորդ տարվա համեմատ միջոցառումների էական մասը չիրականացրած, սակայն ծախսերի աճեր արձանագրած գիտական կազմակերպությունների գործունեության արդյունավետությունը:

9.4 Միջոցառումներ ձեռնարկել և ստեղծել այնպիսի վերահսկողական մեխանիզմներ, որոնցով կբացառվեն կազմակերպությունների կողմից եռամսյակային կտրվածքներով ճշտված պլանների նկատմամբ դրամարկղային և փաստացի ծախսերի միջև տարբերությունները, տեխնիկական պատճառներով ավել բացված ֆինանսավորումները և որպես մնացորդ դրանց ձևակերպումները:

9.5 Ներդնել վերահսկողական այնպիսի գործիքակազմեր, որոնց կիրառմամբ կվերահսկվեն կազմակերպությունների կողմից հաստատված եռամսյակային ոչ ֆինանսական արդյունքին միտված չափորոշիչների էական թերակատարումները:

Վերահսկողական ընթացակարգեր սահմանել, որպեսզի դրանց հետևանքներով ձևավորված տնտեսումները, ցածր կատարողականները և միջոցառումների չիրականացումները չազդեն հաջորդ ժամանակահատվածների հաստատվող նախահաշիվների, ֆինանսական հայտերի ընդունման և բյուջետային ֆինանսավորման ցուցանիշների վրա:

9.6 Սահմանել, հիմնավորել կամ բացառել Կոմիտեի Ծրագիր 3-ի թեմաներում ընդգրկված «Միջազգային ճանաչում ունեցող խմբի ղեկավարներ» առանձնացված կարգավիճակով ցուցանիշը և վերջինիս կիրառելիությունը:

9.7 Ստեղծել վերահսկողական մեխանիզմներ, որոնց կիրառմամբ Կոմիտեի, կազմակերպությունների հետ կնքված պայմանագրերով սահմանված պայմանագրերի կողմեր հանդիսացող գիտական, գիտատեխնիկական հաստատությունների տարեկան գնումների պլանով նախատեսված գնումների ընթացակարգերը, ինչպես նաև գնումների հետ կապված ամբողջական գործառույթները կհամապատասխանեն «Գնումների մասին» ՀՀ օրենքի և գնման ոլորտը կարգավորող այլ գործող իրավակարգավորումների պահանջներին:

9.8 Հսկողություն սահմանել «Հաշվեքննիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված տեղեկատվության տրամադրման ամբողջականության, լիարժեքության, պահանջված ձևաչափերի համապատասխանության վրա:

9.9 Ընթացիկ եզրակացությունում ներկայացված վերոնշյալ առաջարկությունների հիման վրա մշակել և հաստատել միջոցառումների ծրագիր, որը կպարունակի յուրաքանչյուր միջոցառման համար պատասխանատու ստորաբաժանումներ և միջոցառման կատարման ժամանակացույց: